ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

20.10.2015թ.
264-ի 3

«Համալսարանականներ» համատիրության
նախագահ պարոն Արտաշ Մամաջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մամաջանյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Համատիրության ժողովի որոշումը վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի ընտրության մասին:
2. 2013թ և 2014թ համատիրության ժողովների արձանագրությունները (համաձայն կանոնադրության 18 կետի)
3. 2013, 2014թթ վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները (համաձայն կանոնադրության 22 գ/ ենթակետի և 44 դ/ ենթակետի)
4. 2013-2015թթ եռամսյակային վարչության նիստերի արձանագրությունները (համաձայն կանոնադրության 26 կետի)
5. Համատիրության նախագահի 2015թ վերընտրման արձանագրությունը (համաձայն կանոնադրության 22 բ/ ենթակետի)
6. 2014թ վարչության և վերստուգիչ հանձնաժողովի վերընտրման արձանագրությունը (համաձայն կանոնադրության 22 բ/ ենթակետի)
7. ժողովի որոշումները վերստուգիչ հանձնաժողովի կազմի փոփոխությունների մասին (Դավիթ Հայրապետյան՝ բնակության վայրը փոխելու կապակցությամբ) (համաձայն կանոնադրության 44 ա/ ենթակետի)

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան